

ՆՈՐ ԱՎԵԴԱՔԵՐ

Բ. ՏԱՐԻ

ՀԱՆԷՊ, 26 ՅՈՒԼԻՍ, 1929

ԹԻԻ 15

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ՏԷՐ, ՄԵԶԻ ԱՂՕԹՔ ԸՆԵԼ ՍՈՐՎԵՑՈՒՐ

ՊԱՏ. Հ. Յ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ

ԱՍՏՈՒԱԾ ԱՄԵՆԱԿԱՐՈՂ Է

ՎԵՐ. Հ. ԿԵՕՎԴԱԼԱՅՃԵԱՆ

ԻԳԱԿԱՆ ՍԵՌԸ ԵՒ ԱՆՈՐ ԴԵՐԸ

ՏԻԿ. Ա. ՇԻՐԻԲՃԵԱՆ

ԵՐԿՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿԸ

Ր. Ա. ՃԷՊԷՃԵԱՆ

ՇՈՂԻԿՆԵՐ

ԳԻՏԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷՋԸ

NOR AVEDAPER
BOITE POSTALE 287, ALEP, SYRIE

«ՏՊԱՐԱՆ ԳՈՒԼԵՃ» ՀԱՆԷՊ

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Կրօնարարության, կրթական գիտական պարբերական
Արտոնատէր Վեր. Կ. Յ. Յարութիւնեան
Տնօրէն—Խմբագիր Տ. Ճ. Խրլոբեան

ԲԱԺԱՆՈՐԴԱԴՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.—

Սուրիա, տարեկան 1.50 Սուրիական ոսկի:
Արտասահման, տարեկան 1.50 տոլար:

„ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐԻ” Ի ԿԱՐԴԱՑՈՂՆԵՐԸ

Նէկոսիայէն մեզի կը գրեն.—

Այս տարուան բաժանորդներուն մէջ կը գտնուին 1. երիտասարդ մը որ աւիսներէ անկողնի կը ծառայէ, առանց չարժիլ կարենալու, անկողնին մէջ կը կարգայ եւ շատերուն կը պատմէ: 2. երկրորդ բաժանորդ մը ութը անդամներէ բաղկացեալ ընտանիք մը կ'ապրեցնէ փերեկակութեամբ. մինակ աշխատողն է ընտանիքին. նեղ վիճակի մէջ են: 3. երկու բաժանորդներ միշտ լեռները կ'ապրին, տարին հազիւ 1-2 անգամ քաղաք կ'իջնեն: 4. հինգերորդ մէկ բաժանորդ է թուրք մը, որ նոր քրիստոնեայ եղած է. կինը անոր կը կարգայ տանը մէջ:

ԼԱՒԱԳՈՅՆ ՆՈՒՒՐԸ

Շատեր կան որոնք շատ նեղ պարագաներու տակ իրենց պզտիկ գումարները կը զրկեն «Նոր Աւետարներ»ի անկէ չգրկուելու, իսկ շատ շատերուն վիճակը երբեք չի ներքեւ անոր բաժանորդագրուելու: Լաւագոյն մէկ նուէրդ պիտի ըլլար այսպիսիներուն օգնել «Նոր Աւետարներ» մը ստանալու համար:

ԿԱՐԴԱՑԷՔ

ՅՈՅՁԵՐ և ԽՈՅՁԵՐ

ԲԵՍԹԱՆՈՑՑԻ ԵՒ ՊԵԹՈՎԷՆ

ԶԱՓՈՒ ՎՐԱՅ ԴՊՐՈՑ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԵՒ ԻՆՔՆԱՍՊԱ-
[ՆՈՒԹԻՒՆ ՏՂՈՑ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐ

Հրատարակութիւն «ՀԱՅ ԴՊՐՈՑ»ի
Պընէն, Զուիցիերիա

ՊԱՐՁ ՔԱՐՈՋՆԵՐ, հինգ հատոր
Ղեւոնդ Եպս., Դուրեան

ԿԸ ՓՆՏՈՒԻ

Տիկ. Կիւլէնիա Մէնէշեան (ծնեալ Կ. Բարսեղ Գալլէտէրեան, Ամասիա) կը փնտռէ իր քեռորդին Արմէն Շիրվանեան (որուն հօրը անունն է Յակոբ եւ մայրը՝ Լուսիա, վարժուհի), որ մօտաւորապէս 25 տարիէ ի վեր Ամերիկա կը բնակի, եւ հիմայ Շիրվանի Եւսալ կը կարծուի: Իմաց տալ «Նոր Աւետարներ»ի հասցէով:

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Բ. ՏԱՐԻ

ՀԱԼԷՊ, 27 ՅՈՒԼԻՍ, 1929

ԹԻԻ 15

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

ԴԱՒԱՆԱԿԱՆ, ՎԱՐՉԱԿԱՆ ԵՒ ՄԻՍԱԿԱՆ հիմնական տարբերութիւններ Հայ Առաք. և Աւետ. Եկեղեցիները իրարմէ կը բաժնեն: Եւ քանի երկու քոյր եկեղեցիներն ալ յիշեալ կէտէրուն մէջ ներկայիս երբեք չեն փափաքիր ունէ փոփոխութիւն մը ներմուծել, անկարելի է երեւակայել միութիւն մը՝ որ այս երկուքին իրարու մէջ ձուլումովը յառաջ կրնայ գալ: Եւ նոյն իսկ եթէ միութիւն մը հաստատուի, իւրաքանչիւրը անխախտ պահելով իր սովորութիւնները, ըմբռնումները, ևայլն, հարցը տակաւին պիտի մնայ անլոյծ, և աւելի բարդ ու կոճկոտ կացութիւն մը յառաջ պիտի գայ, ստեղծելով ինքն իր մէջ անհամաձայն, աններդաշնակ կազմակերպութիւն մը կամ քաոս մը:

ԲԱՅՑ ԲՐԻՏԱՆԵՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԵՒ ԲՐԻՏԱՆԵՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՒ ՄԷՋ ունէ դաւանանքէ, վարչական զրութենէ եւ արարողութենէ բարձր բան մը կայ, — նպատակը: Եթէ կարելի չէ դաւանանքի, վարչական զրութեան և ծէսէրուն մէջ միանալ բայց կարելի է և պէտք է միանալ նպատակի մէջ: «Առսուածաբանութիւնը մեզ կը զատէ բայց Աւետարանը մեզ կը միացնէ», ըսաւ Գեր. Տ. Բարզէն Ս. Կիւլէսէրեան, Պալատիքի կրօնական դաստիարակութեան համաժողովին մէջ: Այդ նոյն Աւետարանը գրուած է վկայելու Բրիստոսի մասին, որուն վերջին պատգամն

էր իր Աւետարանին քարոզութիւնը (Մատթ. 28. 19-20, Մարկ. 16. 15, Ղուկ. 24. 47-48, Գործք. 1. 8.) Կենդանի վկաներ ըլլալ Բրիստոսի, մարմնացեալ պատկերը, կենդանի նամակները ըլլալ Անոր, ահա այն նպատակը որ գերազանցօրէն վեր է բոլոր դաւանական, վարչական, ծիսական ըմբռնումներէ, սովորութիւններէ, որոնք մարդկային տարրեր են պատրաստուած իբր միջոց ծառայելու գերազոյն նպատակին իրագործումին: Ահա այս է այն հասարակաց գետինը որուն վրայ կրնան նկեղեցիները միանալ:

ՅՈՒՍԱՏՈՒՆՆԵՐԵՒՅԹՆԵՐ: «Հայ ազգը իր գոյութիւնը կը պարտի իր ազգային եկեղեցիին որ աւանդապահը եղած է ազգային սրբութիւններուն. ներկայիս Հայց. Եկեղեցին է այն միակ յենարանը որուն շնորհիւ հայը պիտի կրնայ իր գոյութիւնը պահել զաղթավայրերու մէջ:» Կ'ըսեն ու ըսած են շատ շատեր երբ կ'արտայայտուին Հայ Առաք. Եկեղեցիին մասին: Պէտք է կրկնել թէ հայութիւնն ամբողջ շատ բան կը պարտի Հայց. Եկեղեցիին: Բայց այս ճշմարտութիւնը սա սխալ գաղափարը յառաջ բերած է թէ ընկերութեան մէջ եկեղեցիին դերն ու դիրքը կը կայանայ ազգային, քաղաքական ազգակ մ'ըլլալէ և այս կերպով անսեսուած է անոր հոգեւոր նպատակը: Այս տիրող բայց սըխալ ըմբռնումին դէմ կ'արտայայտուի Բարզէն Սրբազան «Սիոնի» ի այս տարուան թիւ 7 ին մէջ, ուր կ'ըսէ. «Իրենց համար պարծանք կը համարեն եկեղեցին զատել կրօնքէն եւ կը կարծեն տ-

նոր ազգային զիծերուն միայն արժէք մը ընծայել . . . Եթէ մէկը անսարքեր է կրօնքին հանդէպ և չերթար իր Մայրենի Եկեղեցին իր կրօնական պարտքը կատարելու և ասոր հետեւէն կը նայի միայն անոր համար որ ազգային զիմացի՞ծ ունի, կը հակասէ ինքն իրեն: . . . Եկեղեցին ամէնէն առաջ ամէնէն վեր հոգեւոր հաստատութիւն մ'է, կրօնական է . . . Նոյն ինքն հաւատացեալ ժողովուրդն է Եկեղեցին:» Գարեգին Եպիսկոպոս Խաչատուրեան, մէկը հոգեւոր փորձառութեան տէր ազնիւ տիպիւնէն, «Փարոս»-ի այս տարւումն թիւ 6-ի խմբագրականին մէջ կ'ըսէ. «Ամենքն ալ կ'ընդունին թէ մեր Եկեղեցին ճշմարտամ մը կ'անցնէ: Ամենքն ալ դարմաններ ցոյց կ'ուտան: Այդ ամէն միջոցները կրնանք իւրացնել երկու բառի մէջ: ՀԱՒԱՏՔ և Կարգապահութիւն Այս հեղինակաւոր հայ եկեղեցականները զգալով հաւատքի և հոգեւորութեան պակասը, կ'աշխատին եկեղեցին ցուցնել իր ճշմարտ գերին և գիրքին մէջ: Առանձին չեն ասոնք, որոնց թիւը աւելնալով անոնք կրնան հոգեւոր ղօրաւոր ոյժ մը կազմել, զիտակից՝ եկեղեցիի հոգեւոր աւետարանական նպատակին և բնոյթին: Ահա այս զիտակցութիւնը կրնայ կարեւոր ազգակ մը ըլլալ այս երկու քոյր եկեղեցիները իրարու մօտեցնելու մէջ փոխադարձ օգնութեան ոգիով ուսելի սերտ միջեկեղեցական յարաբերութիւններ մը շահելու և նոյն հոգեւոր նպատակին իրազօրծումին համար գործակցելու մէջ: Այսպիսի գործակցութիւն մը կարելի նկատել կուտայ այն թոյլատու ոգին որ կը գտնուի այս երկու եկեղեցիներուն մէջ ալ. Հայ Առաք. և Աւետ. եկեղեցիներէն ոչ մէկը իրեն չի սեպհականացներ փրկութիւնը, ուրիշները կուրուստի դատապարտուած նկատելով. Գարեգին Եպս. իր մէկ «Հօտ և մէկ Հո-

վիւ» յօդուածին մէջ (փարոս թիւ 6, Գ տարի) կ'ըսէ. «Աւետրդ է ըսել թէ Գաւիթը, (ուր քրիստոնէից հօտը կը գըտնուի). . . այս կամ այն եկեղեցին, կրօնական այս կամ այն համայնքը չէ, այլ այդ եկեղեցիներէն ու այդ համայնքներէն ընտելանալու անանուն դասն է:»

ԱՅՍՊԻՍԻ ԳՈՐԾԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ մը մերձեցում մը յառաջ բերելու համար պէտք է գործնական միջոցներու զիմել:

1. Եկեղեցական բեմերու փոխանակում: Առաք. եկեղեցւոյ կղերը Աւետարանական բեմի վրայ և Աւետ. քարոյիչը Առաք. եկեղեցւոյ մէջ: Շատ մը տեղեր սովորական երեւոյթ մըն է այս, զոր պէտք է ընդհանրացնել:

2. Նոյն քաղաքին կամ նոյն շրջանին մէջ կրօնական ժողովներ սարքել երկու եկեղեցիներու կրօնական պաշտօնէութեան մասնակցութեամբ, տեղին հոգեւոր և բարոյական վիճակը ուսումնասիրելու և դարմաններ գտնելով գործակցելու համար:

3. Համանման ծրագրով կիրականօրէն զպրօցներ կազմակերպել, որուն մասին աւելի երկարօրէն գրած էինք մեր նախորդ խմբագրականներէն մէկուն մէջ (Բ. տարի թիւ 10):

4. Նոյն նպատակով կրօնական ընկերութիւններ հիմնել և անոնց միջև գործակցութիւն մշակել:

5. Հայկական Ս. Գրքի Բնկերութիւն մը կազմելու աշխատիլ, այս երկու եկեղեցիներու օժանդակութեամբ: Այս ընկերութիւնը կրնայ զիւրութեամբ Ամերիկեան կամ Անգլիական Ս. Գրքի ընկերութեան հետ համաձայնութիւն մը գոյացնել և գործակցիլ:

6. Այս երկու եկեղեցիները իրարու ծանօթացնել: Պէտք է խոստովանիլ թէ այս մասին շատ ընկիւք կայ. իրարու

մասին տակաւին շատ նախապաշարուածներ և կանխակալ սխալ կարծիքներ կան: Հայ Աւետ. քարոզիչները, հովիւները պէտք եղած չափով հմուտ չեն հայ կրօնական գրականութեան, հայ եկեղեցական պատմութեան, հայ եկեղեցաւարութեան և այլն. պէտք է օգտուիլ այդ հասարակաց գանձէն: Նմանապէս Հայ Աւաք. կղերականութիւնը պէտք է ուսումնասիրէ Աւետարանական եկեղեցւոյ պատմութիւնն ու գրականութիւնը, իրապէս կարենալ գնահատելու համար զայն: Դպրոցներու մանաւանդ կրօնական վարժարաններու մէջ կարելի է այս մասին զիւրութիւններ ստեղծել:

ԻԲՐԵՒ ԱԶԳ. ԲԱՂԴՈՐՈՇ ՎՃՌԱԿԱՆ ժամանակի մը մէջ կ'ապրինք, որուն նշանակութիւնը տակաւին այնքան խոր չէ տպաւորուած միտքերուն վրայ: Այսպիսի ատեն մը եկեղեցիին գերագոյն պարտականութիւնն է իր հոգեւոր նըպատակին լման գիտակցութեամբը գտնելու Հայ կեանքին ուղղութիւնը մը տալ, որ քառասուն երեսնամյա մ'ուսնի ոյժով: Ընդհանուր հայութեան բարոյական և հոգեւոր մակարդակը բարձրացնելու այս վսեմ գործին մէջ պէտք են երկու քոյր եկեղեցիները գործակցին, շօշափելի արդիւնք մը յառաջ բերելու համար: Արդեօք երկու եկեղեցիներու ներկայ հայ կրօնականութիւնը քաջութիւնը պիտի ունենա՞յ սահմանները անցնելով իրարու ձեռք տալու, պիտի կրնա՞յ այս տեսիլքին հուրովը վառիլ և փրկիլ հայ խլիականները կատարեալ բարոյաւթումէ, արհամարհելով բոլոր աւանդամբութիւնները, նախապաշարումները, անձնասիրական միտումները: Այս հարցին պատասխանը մեծապէս պիտի ազդէ որոշելու մեր մօտիկ ապագան:

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

«ՏէՐ ՄԵՋԻ ԱՂՕԹՔ ԸՆԵԼ ՍՈՐՎԵՑՈՒՐ»

Կեանքը աղօթք է: Կեանքին գերագոյն նպատակը աղօթք է: Ստեղծագործ և արդիւնաբեր կեանքի մը գաղտնիքը աղօթքն է: Ձի աղօթքը Աստուծոյ հետ հաղորդակցութիւն, միութիւն՝ այսինքն Աստուծոյ հետ նոյնանալ, Աստուածորդի ըլլալ է: Այս առումով աղօթքը Աստուածճանաչութիւն կ'ենթադրէ:

Յիսուս զԱստուած բերաւ աշխարհ: Իր գալուստը աստուածայայտնութիւն է: «Ան որ զիս տեսաւ Հայրը տեսաւ»: Անով զԱստուած գիտենք: Անոր հետ կրնանք միանալ: Աստուած՝ Յս. Բրիստոսով, մեր Տէրոջմով Սէր է: «Միրելիներ, մէկմէկ սիրենք վասնզի Սէրը Աստուծմէ՛ է. ու ամէն ով որ կը սիրէ Աստուծմէ՛ ծնած է ու կը ճանչնայ զաստուած ան որ չի սիրեր զԱստուած, զԱստուած չի ճանչնար. վասնզի Աստուած Սէր է:» Ասիկա գերագոյն յայտնութիւն և երկնային շնորհ մըն է: Այս աւետարանին հաւատացողը տիեզերքի գերագոյն արարածն է:

Աղօթքը, ուրեմն, Աստուծոյ՝ մեր Տէրոջմով եղած սիրոյն խորունկութիւնը, բարձրութիւնը լայնքն ու երկայնքը չափելու աշխատիլ է: Ամէն ոք կրնայ ընել այս աղօթքը. զի Աստուած Սէր է:

Սէրը հացի չափ պարզ և կեանքի չափ խորունկ է: Սէրը կեանքն իսկ է: Մէկ տարեկան երախայէն մինչև 100 տարեկան ծերը Սէրը գիտեն և կրնան սիրել, ու ինչպէս եղջերուն ջուրի վտակներուն, նոյնպէս Սէր Աստուծոյ կը բաղձան:

Ստեղծագործ, արդիւնաբեր և ազդու կեանքի մը գաղտնիքը աղօթքն է: Ոչ թէ՛ մեքենաբար զիշեր ցորեկ անդադար աշխատողներն են ստեղծագործ և արդիւնաբեր կեանքերը, այլ Յիսուսի, Պօ-

դոսի և Յովհաննէսի, Նարեկացիի և Շնորհալիի, Ս. Ֆրանչիսկոսի և Սատու Սուռնտար Սինկի նման աղօթել գիտցողները:

«Աղօթքը ի խորոց սրտի խօսք ընդ Աստուծոյ» է: Աղօթքը մոերացկանութիւն չէ. այլ նարեկացիի ու Շնորհալիի նման» ոչ ի տուբան այլ ի տուողին յաւէտ կարօտիւ. ոչ հարսանեկան խնջոյքին այլ փեսային անձկութեամբ մաշելը» է:

Եկեղեցիի մը կեանքը, սիրտը, բազմակերպը, սիւնը Աղօթածողովն է: «Հոգիս Աստուծոյ, կենդանի Աստուծոյ ծառաւի» է ըսել գիտցող հոգիներու միութիւնն է. և ոչ թէ ծուօրէն քարոզ մտիկ ընելու վարժուածները, Պատարագի և ծիսակատարութեանց հանդիսատես եղողները:

Աշխարհի վրայ, «Ես զԱստուած կը ճանչնամ, զԱստուած կը սիրեմ, Աստուծոյ, իմ երկնաւոր Հօրս հետ, կը հաղորդակցիմ, Անոր որդին եմ և Ան իմ մէջս կը բնակի», ըսելու չափ գերազոյն առանձնաշնորհում և ամենազգուար պատասխանատուութիւն չկայ: Եւ աղօթքը ճիշդ ասիկա է: Մէկ տարեկան երախան իսկ կրնայ աղօթել—այսինքն զԱստուած ճանչնալ, սիրել ու դէմ յանդիման տեսնուիլ Անոր հետ, զի Աստուած Սէր է:

Այս առումով աղօթել և չ'այլակերպիլ, չբոցավառիլ, չ'աստուածանալ, անհուն գութի կարեկցութեամբ լեցունած, ամենազօր կամքով մը տառապանքի ձորը չ'իջնել և ալ ու ձախ բուրումնաւէտ ծաղիկի մը նման մխրթարութիւն, յոյս, հաւատք, կեանք, բըժըշկութիւն, ազատութիւն չսփռել բացարձակապէս անկարելի է:

Այսօր մեր եկեղեցիներու ապիկարութիւնը և մեր ժողովուրդին այլասերումը ուրիշ ոչ մէկ բանի վերագրելի է, բայց միայն Յիսուսէն սկսեալ մինչեւ Սատու Սուռնտար Սինկի նման աղօթել

գիտցող հոգիներու չգոյութեան: Մեր ազգին քաղաքական, տնտեսական, կրթական ու բարոյական փրկութիւնը աղօթք ընել գիտցող հոգիներու մէջ կը կայանայ:

«Եթէ մէկը զիս կը սիրէ իմ խօսքս պիտի պահէ ու իմ Հայրս զանկա պիտի սիրէ և անոր պիտի գանք, ու անոր քով օթեան պիտի ընենք»: Այս Աստուածը գտած չենք տակաւին, զի աղօթք ընել սորված չենք:

Աւպէրթ Բլաք-Ուիքքօֆ իր the science of Prayer գրքոյին մէջ այս նիւթին շուրջ խօսելու ատեն այսպէս կ'ըսէ. «Աղօթք ընել չենք գիտեր և երբէք չուրջ ձեռնարկ մըն ալ ըրած չենք սորվելու զայն: Ինչպէս որ երկար դարեր ընութեան մեծ ոյժերը կ'սպասէին մարդուն, տիրանալու իրենց զաղանեաց և գործածելու զանոնք ի նպաստ իր երջանկութեան, նմանապէս զարեւոյժ աղօթքի անսպառ ազդեցողները սպասեր են և տակաւին կ'սպասեն մարդուն, տիրանալու իր սկզբունքներուն և ծառայեցնելու զանոնք իր օգտին: Իրր նորընծաներ, անաքստիներ կը կենանք այս ամենախորհրդաւոր և սակայն ամենազործնական Զօրութեան առջև, զոր Աստուած մեր տրամադրութեան տակ զրած է: Կ'արժէր որ մեր ընդհանրական և մշտական ազերսը ընէինք «Տէր, մեզի աղօթք ընել սորվեցուր»ը: զի երբէք կարող պիտի չըլլանք ազդուօրէն աղօթելու մինչև որ զիտնաք ինչպէս աղօթելը»:

«1898 ի ամբան Նիւ Եօքսի երկու երիցականները ներկայ գտնուեցան Նօրթ Ֆիլտի կրօնական Գօնֆէրմանին: Աղօթածողովի առաջնորդներէն մին ուղեց ներկաներուն աղօթքի փորձառութեան տեղեկանալ: «Եղբայրներ, ըսաւ, կ'ուզենք այսօր խոստովանութիւն մ'ընել Աստուծոյ և իրարու: Թող ամէն անոնք որոնք օրական կէս ժամ կուտան աղօթ-

քի, և Աստուծոյ զործակցութիւնը կը հայցեն, ձեռքերնին վերցնեն»: «Միայն մէկ ձեռք բարձրացաւ: Յետոյ 15 վայրկեանի իջեցուց. ներկաներուն կէսն անգամ ձեռքերնին չվերցուցին: Երբ 5 վայրկեանի իջեցուց, բոլոր ձեռքերն ալ բարձրացան. և սակայն անոնցմէ մէկը վերջէն ինքզինքը մեղադրեց ըսելով. «Անկեղծութեան» վրայ զատահ չէի երբ ձեռքս վերցուցի ըսելով թէ օրական հինգ վայրկեան յատկացուցած եմ աղօթքի: Սոսկալի յայտնութիւն մ'հղաւ ինծի գիտնալ թէ որքան քիչ ժամանակ վատնած եմ Աստուծոյս հետ հաղորդակցելու»:

Հակադրելով անոր հետ, հարցնենք Մր. Էտիսընի թէ օրական քանի ժամ կը յատկացնէ գիտութեան պահանքներուն տիրանալու համար: Օրական առնուազն 18 ժամ և երբեմն օրերով ու զիջիններով քունի և ուտելու հազիւ մի քիչ ժամանակ զտնելով, ան ալ 40 տարիներէ ի վեր:

Զարմանալի չէ թէ ինչո՞ւ խորհողները այոքոն գերազանցած են իւր նգրողները, երբ բազմաթիւ հանգիստ չեն ունենում:

«Յիսուս ձայնիս Դուն ունիլնդիր, եւ ընդունէ իմ սիրտս տխուր: Դուն որ անդուլ աղօթք բրիր, Աղօթք ընել ինձ սորվեցուր»: Գալիլէ

Հ. Յ. ՅԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ

ԱՍՏՈՒԱԾ ԱՄԵՆԱԿԱՐՈՂ

(Շար. և վերջ)

Խնդրանք Մը Հայ Բարոյիչներէն

Մահաւանդ Արդիապաշտութեան

Մի քանի ամիս առաջ Վեր. Ս. Մանուկեան «Նոր Աւետարեք»-ի մէջ հրատարակուած իր բաց նամակին մէջ եկեղեցիներուն կը յանձնարարէր որ անոնք արդիական գաղափարներու տէր քարոզիչներուն հանդէպ անձնուիրական թոյ-

լատու ոգի մը ցուցնեն. և կ'աւելցնէր թէ այս կերպով եկեղեցիները անոնց շատ մը բարի բաները պիտի կրնան վայելել: Ասկէ քիչ առաջ ևս Վեր. Կ. Ատանալեան «Արդիապաշտութիւնը» խորագրով իր գեղեցիկ գրութեան մէջ կը յայտնէր թէ արդիապաշտութեան հակառակիլ կը նշանակէ բարձրագոյն յառաջդիմութեան թշնամի ըլլալ, և արդիական գաղափարներու տէր քարոզիչներուն դէմ խօսիլ անարգարութիւն է և արդիւնքն է ապիտութեան:

Վեր. Ս. Մանուկեան մեր շատ սիրած մտերիմ մէկ բարեկամն է, իսկ Վեր. Կ. Ատանալեան մեր առաջնակարգ քարոզիչներէն մէկն էր, երբ տակաւին հայրենիք կը գտնուէինք. այնպէս որ երկուքն ալ ի վիճակի են առաջնորդ ըլլալու թէ եկեղեցիներուն և թէ իրենց ընկեր քարոզիչներուն: Փոխանակ եկեղեցիներու և պահպանողական քարոզիչներու յանձնարարելու որ իրենց արդիապաշտ պաշտօնակիցներու հանդէպ ներողամիտ գտնուին, արդեօք աւելիլու ըրած պիտի չըլլային, եթէ սակաւաթիւ արդիապաշտներու յանձնարարեն քիչ մը պահպանողական ըլլալ, նոյն իսկ իրենց յանձնառած գործին և Աստուծոյ Թագաւորութեան սիրոյն համար: Քանզի քարոզիչները միայն անհատներ են, իսկ եկեղեցիները՝ համայնքներ, որոնց օգտին մէկ պահանջն է այս:

Երիտասարդ պաշտօնակիցներ, ձեր նախորդներէն աւելի արդիամիտ ըլլալնիդ շատ չենք տեսներ: Աւելի կ'ուրախանանք և ապագայի մասին աւելի մեծ յոյսեր կը տածենք, դիտնալով որ դուք բարձր ուսում մ'առած էք: Քանզի ծանօթութիւնն ու հմտութիւնը ձեր ստանձնած գործին մէջ էն ազդու միջոցներ են, որոնցմով դուք պիտի կրնաք օգտակար ծառայութիւններ մատուցանել թէ՛ աշխարհի և թէ՛ ձեր ժողովուրդներուն:

Անշուշտ կ'ընդունիք՝ թէ այն զիրքը, զոր Ս. Գիրք անունով ձեր բեմերուն վրայ կը գործածէք, Աստուծոյ առաջնորդութեան և պաշտպանութեան տակ զրուած, դարերէ ի վեր պահուած, Աստուծոյ անունը կրող զիրք մըն է։ Մեր ազգը զայն ընդունած օրէն ի վեր զայն կը ճանչնայ փոփոխութենէ զերծ իբր Աստուծոյ Սուրբ Գիրքը, և յազանքով կը յայտնէ տնոր մասին ունեցած սէրն ու հաւատքը։ Արդիամիտ ըլլալ Ս. Գիրքն ալ փոփոխութեան ենթարկելու մեզ չ'ստիպեր կը կարծեմ։

Կը յուսամ որ վեր. Կ. Առաւելիան Ս. Գիրքը իր ամբողջութեամբը անփոփոխ պահելու մեր փափաքը ծայրայեղ հիմնապաշտութիւն պիտի չնակատէ, և չպիտի խորհի թէ մենք «ոչ մէկ արարողութիւն անխախտելի, անքակտելի, անձեռնմխելի է» գաղափարը կը յայտնենք։ Ասկէ 58 տարի առաջ բողոքական եղայ երբ տակաւին 17 տարեկան էի (մենք մեր բոլոր մօտաւոր պարագաներովը կաթողիկէինք)։ Կաթողիկէ քահանաներ շատ աշխատեցան զիս վերջստին եկեղեցի բերելու բայց չյաջողեցան։ Ես, մայրս և քոյրս կը կազմէինք մեր ընտանիքը։ Գերապայծառը քահանայի մը միջոցաւ մօրս լուր կուտայ որ ասկէ վերջ ինք պահք պահելու ստիպուած չէ (քանզի խորհած են որ ես մայրս պիտի ստիպեմ պահքը չպահելու և այս կերպով բարոյական կորովէ պիտի զրկեմ)։ Իսկ մայրս երբ կը հարցնէ թէ պահք չպահել մեզք չէ՞. կը բռնականը այսպէս կը պատասխանէ. «Պահի Աստուծոյ մեկ հրաւանը չե, այլ եկեղեցի մեկ պահուիր. եկեղեցին կրնայ տարբեր պարագաներու տակ իր զրած պատուէրները փոփոխութեան ենթարկել»։ Ասիկա շատ շիտակ խօսք մըն է։ Այս ամէն եկեղեցի բարեփոխելի ծէս ու տրարողութիւններ, սովորութիւններ ունի, որոնք բարեկարգիչներու, բարի

մարդերու և ժողովներու միջոցաւ հաստատուած են։ Անոնցմէ և ոչ մէկը անխախտելի, անքակտելի և անձեռնմխելի է. աւելի բարի մարդիկ, աւելի մեծ ժողովներ կրնան զանոնք փոխել կամ բարեփոխել և անոնց տեղ պահանջին համեմատ աւելի լաւը և օգտակարը դնել։ Աստուածաշունչը փոխելու իրաւունքն ալ կը պատկանի նոյն ինքն Աստուծոյ, ինչպէս որ Երբայեցոյց թուրթին մէջ յայտնի կը տեսնուի...

Մինչ մենք հայրենիք կը գտնուէինք մերթ ընդ մերթ կը լսէինք որ Եւրոպայի մանաւանդ Ամերիկայի մէջ բոլոր գուլէճները, աստուածաբանական դպրոցները և քարոզիչները արդիապաշտ եղած են և թէ անոնք Ս. Գիրքի կարգ մը մասերը կը մերժեն, շատ մը զէպքերէն մէկ մասը իբր աշխատութիւն, ուրիշ մասը իբր առասպել նկատելով անոնց ոյժն ու հեղինակութիւնը կորսընցնել տուած են...։ Վերջապէս Ամերիկա եկանք և տեսանք որ այդ խօսքերը չափազանցութիւններ են։ Չեմ ըսեր թէ այդպիսի դպրոց և ուսուցիչ, այդպիսի եկեղեցի և քարոզիչ չկան. բայց անոնց թիւը կարծուածին չափ շատ չէ, և Աթլանթա, ուր ես կը գտնուիմ, Մ. Նահանգաց հարաւային նահանգներուն մէջ երկրորդ մեծագոյն քաղաքն է, իր 300,000 բնակիչներով։ Իսկ նոյն չրջանակին մէջ աւաջին գիրքը կը գրաւէ իր բարձր դպրոցներով. բնակչութեան պէտքը զոհանցելու բաւական պետական շատ մը բարձրագոյն վարժարաններէ (հայ սքուլ) զատ տասը գոլէճ և չորս աստուածաբանական վարժարաններ կան։ Այս քաղաքին մէջ 261 եկեղեցիներ կան, որոնց հինգը կաթողիկէներու և մնացեալը բողոքականներու կը պատկանին։ Հոս զբանոց մեծագոյն երեք յարանուանութիւններէն Մեթոտական, Մկրտական և Երեցական եկեղեցիները, որոնց ե-

րէցներուն նամակով հարցուցի թէ ի՛նչ է իրենց եկեղեցիներուն եւ արթիւն-պաշտ քարոզիչներուն թիւը: Տրուած պատասխանէն հասկցայ որ այս երեք յարանուանութիւններու 125 եկեղեցի-ներուն մէջ մէկ հատ իսկ արդիապաշտ քարոզիչ մը չկայ:

Այսու հանդերձ բաւոր Աթլանթա քաղաքին մէջ շատերուն ծանօթ Տր. Տաճ անունով արդիապաշտ քարոզիչ մը կայ, որ ուսեալ եւ անվախ անձ մըն է: Բայց իր թոյր կարողութեանը չկը-ցաւ իր եկեղեցին զոն ձգել: Եկեղեցիին ուսեալ, կարող եւ պատուաւոր անդամ-ներէն ոմանք իրեն յանձնարարեցին որ իր ընթացքը փոխէ, բայց նա իր ուղած կերպով շարունակեց գործել, որուն պատճառաւ հին անդամներէն միայն հարիւրին տասը եկեղեցիին մէջ մնաց: Ասոր վրայ Կիրակի իրիկուն ժամը 7-30ին կատարուող պաշտամունքի ա-տենը Տր. Տաճ սկսաւ շարժանկար ցուցնել եկեղեցիին մէջ եւ այս կերպով նոր համայնք մը կազմաւ: Հիմայ ա-ռանց շարժապատկերի կիրականօրեայ պաշտամունքին մէջ ներկաներուն թիւն է 100-120, շարժապատկերով ներկա-յացում կատարուած պահուն, եկեղեցիին կը լեցուի, այսինքն 800-900 հոգի ներ-կայ կըլլան: Երբ եկեղեցիին կը լեցուի ժողովուրդով առաջին անգամ 15 վայր-կեանի չափ, աղօթքի, երգեցողութեան եւ խրատատուութեան ժամանակ կու-տայ, ապա մէկ ու կէս ժամ շարժա-պատկերի ժամանակ կը տրուի. ճիշտ այս պահուն զանձանակներով դրամ կը հաւաքուի եւ ետքը մէկ ժամ դարձեալ ներկայացումի ժամանակ կը արուի:

Ահա Տր. Տաճ իբր արդիապաշտ իր բարձր ուսումով, մեծ հմտութեամբ եւ միջոցներով կորսնցուց եկեղեցիին բո-լոր հաւատացեալ եւ բարեպաշտ ան-դամները, որոնց տեղ կարգ մը զբօսա-սէր, շարժապատկերով հրապուրուող

եւ հոգևոր կեանքը կարեւոր չնկատող ժողովուրդ մը կըցած է յառաջ բերել:

Յարգելի պաշտօնակից, առանձնաւ-չնորհումդ շատ բարձր է. մարդոց փըր-կութեան գործին մէջ Աստուծոյ հետ գործակից ես (Ա. Կորն. 3. 9.): Դուն պատասխանատու ես Աստուծոյ եկեղե-ցիին որ արիւնով ծախու առնուած է, չըլլայ որ քու արդիապաշտ զիտու-թեամբդ կորուստի մատնես այն հոգի-ները որոնց համար Քրիստոս մեռաւ: «Իմաստութեան սկիզբը Տէրոջը վախն է. եւ հոգիները շահողը իմաստունն է:» Տիեկրըր (Աքլանքա) Հ. ԿէՕՎԳԱԼԱՅՃԵԱՆ

ԻԳԱԿԱՆ, ՍԵՌԸ ԵՒ ԱՆՈՐ ԿՐՕՆԱԿԱՆ ԴՆՐԸ ՏԱՆ ՄԷՋ

Վերնադիրս մեկի երեք տարբեր սա-կայն յարաբերակից տարբեր կը ներկա-յացնէ, — իզական սեռը, տունը եւ հոն կատարելիք կրօնական գերը: Առաջի-նը մեկ կը տանի շատ հին օրերու պատ-մութեան, պրպտելու թէ ի՛նչ էր իզա-կան սեռին բռնած գիրքը այն ատեն: Հին դարերու մէջ անոր գիրքը շատ ող-բալի եւ ողորմելի եղած է: Սկիզբէն ի վեր արական եւ իզական սեռի միջեւ անհաշտելի անհաւասարութիւն մը գո-յութիւն ունեցած է: Մէկը միշտ տի-րող իսկ միւսը հպատակող տարր մը ե-ղած է: Ան իր հեղութեամբ, համբե-րութեամբ եւ աշխատասիրութեամբ մեծ գեր կը կատարէր ան բարեխառ մար-դուն համար՝ որ իրեն կը տիրանար: Ասկէ վատ նա բոլոր իրաւունքէ զրկե-ւած էր. նոյն իսկ իր վաւակներուն վրայ խնամակալութեան իրաւունքը չունէր: Օրէնքի առջեւ ալ ան բոլորու-վին անխօս էր: Դա դարերու միջոցին կը դատարարակուէր ըլլալ կրաւորական եւ ոչ թէ գործօն տարր մը: Եւ ասոր իբր հետեւանքը անոր ձեռքով կատար-ուելիք կարեւոր պարտականութիւններ

ընտկաբար անկատար մնացած են: Իգական սեռը Հնդկաստանի և Չինաստանի խաւար սահմաններուն մէջ ողբերգական պայմաններու ենթարկուած էր: Այն տեղեր աղջիկ գաւաղի մը՝ սիրոյ առաջին և անգիտակից արտայայտումը, անմեղ ժպիտը մօրը կողմէ յուսահատութեան դառն արցունքներով ու հօրը անզուխ նզովքներով կ'ընդունուէր: Նա անընդունիլի էր ծննդեամբ, գերի մը՝ իբր կին, անպատիւ՝ իբր մայր, և մահուամբը իբր ոչնչութեան անդունդը ձգուած զոյութիւն մը:

Իգական սեռի ազատագրութեան շարժումը իրականութեան մէջ մի քանի տեղեր Քրիստոսէ առաջ սկսաւ: Զօրօրինակ, Յունաստան, Աթէնքի մէջ կիներ քանիցս բողոքի ձայներ վերցուցին, մեծ ցոյցեր կատարեցին իրենց քաղաքական իրաւունքները պահանջելու կամ պահպանելու համար: Հռովմի մէջ եւս սկսաւ նմանօրինակ պայքար մը կիսներու կողմէ իրենց հանգէպ զործուած անիրաւութեանց դէմ, որ շատ բուռն էր և քաղաքական հանգամանք մ'ունէր: Այս երկու կեդրոններու մէջ կիներ կը պահանջէին բոլոր կաշկանդումներէ գերծմնալ և մարդոց հետ ազատութիւն և անկախութիւն վայելել:

Այսպէս շատ երկար տեւեց կիներու ճգնաժամը և դառն եղաւ բազմը իգական սեռին: Սակայն քրիստոնէութիւնը վրայ հասաւ և իր լուսարձակ ճառագայթները այս սեռին խաւար անկիւններուն զրկելով յոյս պարգեւեց մեղի: Քրիստոսի քարոզած սկզբունքները այրն ու կինը նոյն մակարդակի վրայ դրին: Քանի հոգեւոր արժանիքները տեղ բռնել սկսան կիներու ստորակարգութեան զտգափարն ալ տնհատանալ սկսաւ: Անուրանալի իրողութիւն մ'է թէ կիները իրենց ազատագրումը եւ բարձրացումը առաւելապէս քրիստոնէութեան կը պարտին: Եւ զարմանալի

պիտի ըլլար եթէ եկեղեցին և ընկերութիւնը զրկէին գանոք այն արժանիքէն որ Քրիստոս շուայլած է անոնց:

Միջին դարու ասպետական շրջանը նոր և որոշ նշանակութիւն մը տուաւ կնոջ դիրքին եւ անոր կարողութեանց: Եւ բաւական յառաջացնելու կարող եղաւ քրիստոնէութեան սկսած զործը: Քրիստոնէութիւնը կինը այր մարդուն հպատակ իբր ընդունելով հանդերձ անուղղակիօրէն բարձրացուց անոր արժէքը իբր անհատ: Խտաւական վերագարթումի միջոցին ալ կիները նորէն արթնցան իրենց դատը յառաջ տանելու, և բաւական յաջողեցան, մեղի ժամանակակից դարուն մէջ նոյն տեսակէն շարժում մը (կիներու Քուէխնգիր Շարժումը) յառաջ եկաւ շատ մը երկիրներու մէջ և տեղ տեղ ալ յաջողեցան իրենց իրաւունքին տիրանալ:

Իգական սեռին իր պայքարներուն միջոցաւ ձեռք բերած յաղթութիւնները մեղի կը խօսին թէ իգական սեռը իր բարեազդութեան ոսկեղարը կ'ապրի: Քանզի այսօր նա «Արարչագործութեան ամենավերջին և ամենագեղեցիկ մի նշան էր» կը նկատուի ինչպէս Միլթըն ըսած էր: Ուրիշ մը կ'աւելցնէ թէ «ապագայի համար ամենաապահով զործիք մըն է կինը ինչպէս Մեծ Վարդապետն ալ այս սեռին մէջ գտաւ իր ջերմ և հաւատարմ աշակերտները որոնք իր գատը ամուր բռնեցին: Ս. Կիները իբր խաչելութեան վերջին և յարութեան առաջին այցելուները քրիստնէական վկայութեան զօրաւոր ներկայացուցիչները եղան: Նաեւ Սր. հոգւոյն երկսեռ ազօթածովի մը վրայ իջնելը որոշ ապացոյց մըն է թէ կիներն ալ Աստուծոյ շնորքը ընդունելու սահմանուած են: Ժամանակի միջոցին անոնք հաստատեցին թէ իրենք ամենաթանկազին ձիրքերով օծտուած գանձեր են, ապագայ մը ապահովելու համար: Մէյրի Լայնը կը

յայտարարէ թէ «կրնե՞րը խորհուրդի եւ գործի աշխարհին մէջ բարձրագոյն դիրքը զբաւեւում կանչուած են:»

Հետեւեալները կենդանի օրինակներ են որոնք իրենց յիշատակներով զարդարած են հին պատմութիւնը եւ անմահ հացուցած են իրենց անուանները: Սր. Հեզլինէ, Մեծն Կոստանզինի մայրը, խաչափայտի զիւտովը նշանաւոր եղաւ: Սր. Օգոստինոսի մայրը, Մօնիքա, իր անառակ որդւոյն համար 32 տարի ազօթ քով պաշարելէ վերջ զայն սիրաշահեցաւ: Կրնա՞նք մոռնալ Միսիս Հ. Պիլլըր Սթօվը որուն զրած գիրքը, (Ազրար Թովմասին Տնակը) գերութեան տաժանիլի գրութեան ամենամեծ հարուածը առաւ: Ֆէննի Քրօսպիի «ով Յիսուս հոգիս պահէ» եւ «Ազատէ կորուսեալն» երգերը եւ իր 2,500 ուրիշ երգերը մեր հոգին խանդավառած են: Ֆլօրէնս Նայթինկէյլը, Խրիմի պատերազմի զինուորներու բժիշկ մայրը եւ պահապան հրեշտակը եղած է: Միս Մէյրի Լայլըն ազգաւ բայց քրիստոնեայ մօր մը զաւակ, ազնկանց դատարարակութեան մէջ կզական տեղ մը կը զբաւէ: Շար.

ՏԻԿ. Ա. ՇԻՐԻՖՃԵԱՆ

ԵՐԿՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿԸ

Ասկէ երկար դարեր առաջ կար տեսն մը երբ մարդիկ չէին տպրեր այնչա՛փ երջանիկ որչափ մենք կ'ապրինք այժմ: Անոնք կը թափառէին երկրիս վրայ ապերջանիկ, անմխիթար, հալածական եւ հորիկ այն բոլոր բարեքներէ զոր մենք հիմա անգիտակից կը վայելենք զիշեր ցորեկ:

Օրին մէկը, պատահամբ, խումբ մը հրեշտակներ երկնքի պատուհանէն վար նայեցան եւ տեսան մարդ արարածներու այս թշուառ վիճակը: Իսկոյն, անոնց հանգէպ գութ մը արթնցաւ իրենց սըրտերուն մէջ, եւ ուղեցին զանոնք մխի-

թարել: Բաւական խորհրդածելէ վերջ թէ ինչպէ՞ս մխիթարէին այս երկրաւորները, որոշեցին իրենց եղեմային երաժշտութենէն բաժին մը հանել եւ տալ անոնց որ երջանկանային: Երբ Հայր Աստուծոյ ներկայացուցին իրենց այս բաղձանքը, նա ժպտեցաւ, եւ հրաման քաւ որ իրենց բաղձանքին զոհացում տրուի: Հրեշտակներն այս լսելով վերջին ծայր հրճուեցան եւ սկսան քով քովի բերել իրենց եղանակին գանազան օրինակները: Բայց աւա՜ղ, բաւականաչափ օրինակներ չգտնուեցան որ ամէն մարդու հատ մը տային: Ուստի, կը տրտեցին իրենց եղանակին, օրինակները այնչափ մատերու, որչափ որ մարդիկ կային այն ժամանակ երկրիս մակերեսին վրայ, եւ վար նետեցին գանոնք երկինքէն:

Իւրաքանչիւր մարդ արարած կտրող եղաւ բաժին մը առնել երկնային մուկիքէն: Բայց ուէ մէկ անհատի բաժինով միայն կարելի չէր երգել երկնային եղանակը: Արդ ամէն անհատ իր կարողութեանը համեմատ սկիզբ մը եւ վախճան մը աւելցուց իր կտորին եւ ըսկըսաւ զայն երգել իբր երկնային եղանակ: Քիչ յետոյ սակայն, մարդիկ տեսան որ ոչ մէկուն երգածը միւսի երգածին կը նմանէր: Հետեւապէս սկսան իրարու սխալները շտկել, ամէն մէկը պընդելով թէ իրենն էր եղեմային մուկիքը: Եւ անա մեծ վէճ մը ծագեցաւ մարդոց մէջ, որ տեսն այն օրէն մինչեւ այս օրս եւ ով գիտէ որչափ դարեր ալ տակաւին պիտի շարունակէ:

ՈՐՈՒՆ ԵՂԱՆԱԿՆ Է ԵՐԿՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿԸ:

Ր. Ա. ՃԵՊԵՃԵԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ՔՐՈՂՆԻԿ

ՊԵՂՈՒՄ ԹՐԻԵՐԻ ՄԷՋ

Մէօզ գետին ամիրն վրայ հին Գերմանական Թրիէր (Trier) քաղաքը ծանօթ է իր հնութիւններով: Վերջին Տր. Լէօշքէի կատարած պեղումներուն իբր արդիւնք 60 Հռովմէական տաճարներ և շատ մը արձաններ, և կարգ մը Լատիններէն արձանագրութիւններ գտնուեցան: Թրիէր Օգոստոս կայսեր կողմանէ շինուեցաւ բերդաքաղաք մը եղաւ. քիչ վերջը այնչափ կարեւորութիւն ստացաւ որ բոլոր Սպանիոյ, Պրիթանիոյ և Կոլերու երկրին (ներկայ Ֆլանդրիան) վարչական կեդրոնը եղաւ: Երբ քաղաքը քրիստոնէական նախակայոյզ կղերի մը առաջնորդութեամբ բոլոր հերոսական մեհեանները և արձանները քանդուեցան և երբ Գերմանական Ֆրանք ցեղը հաստատուեցաւ Ֆրանսոյի մէջ, Թրիէր կորսնցուց իր կարեւորութիւնը: Գտնուած արձաններու վերայ թէ հռովմէական աստուծոյ և թէ՛ անոր համալօր նկատուող գերմանական աստուածութեան անուաները զբոլած են, բայց կան ոմանք որոնց վերայ կարգացուած են մինչև հիմա անծանօթ մնացած աստուածներու անուններ, որոնք Գերմանական Պանթէոնի կը պատկանին: Տակաւին կը շարունակուին պեղումները, որոնց շատ կտրեւորութիւն կ'ընծայուի:

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԵՍՆԻՐԻ ՏԵԻՈՂՈՒԹԻՒՆ

Փրօֆ. Ֆորսայթի իր կատարած քննութեան իբր արդիւնքը կը յայտարարէ որ մարդիկ ներկայիս աւելի կարճ կեանք մ'ունին քան թէ երկար, ինչ որ կը կարծուէր մինչև հիմա: Շիտակ է որ մանուկներու մէջ մահերու թիւը շատ

նուազած է առողջապահական պայմաններու շնորհիւ, բայց չափահասներու կեանքը վաղահաս վախճանի կ'ենթարկուի, առողջապահական միջոցներու չին զիմեր այս երեոյթը սպառնական աղէտի մը երեոյթը կրնայ առնել:

ՇՈՂԻԿՆԵՐ

ԿԵՂԾ ՀԱԳՈՒՍՏ

Նկարիչ մը կը փնտռէր մէկը, որ կարենայ անասակ որդին ներկայացնել: Օր մը խեղճ մուրացիկի մը հանդիպեցաւ. «Ոյս մարդը կրնայ անառակը ներկայացնել» խորհեցաւ ան:

Մուրացկանը պատրաստակամութիւն յայտնեց իր նկարին իբր օրինակ ծառայելու համար, պայմանաւ որ նկարիչը հատուցում մը ընէ իրեն:

Որոշեալ պահուն մարդը ներկայացաւ արուեստագէտին աշխատանոցը, բայց վերջինը չկրցաւ ճանչնալ զինքը:

— Տէր, ինծի հետ ժամադրութիւն մը ըրիք, ըսաւ մուրացիկը:

— Ոչ, ըսաւ նկարիչը, տակէ առաջ քեզ երբէք տեսած չեմ:

— Կը սխալիք, զուք զիս տեսաք և ինծի հետ ժամադրութիւն մը ըրիք:

— Ոչ, անպատճառ ուրիշ արուեստագէտ մը պէտք է ըլլայ. իմ ժամադրութիւնս մուրացկանի մը հետ էր:

— Լաւ, ըսաւ մուրացկանը այդ մարդը ես եմ:

— Այդ դժուր էք:

— Այո:

— Բայց ի՞նչ եղած էք:

— Ես խորհեցայ որ նկարուիչէ առաջ ձեռք մը նոր հագուստ պէտք է ունենամ:

— Լաւ բարեկամ ըսաւ, նկարիչը ևս

քեզի պէտք չունիմ եւ ճամբեց մուրացիկը:

Եթէ դուն աստուծոյ գալու ըլլաս, ճիշտ եղած վիճակովդ եկուր: Կարգ մը հանդերձներ մի՛ հագնիր, եւ մի՛ խորհիր թէ Աստուած քեզ պիտի ընդունի կարգ մը գեղեցիկ գաղափարներուդ եւ փափաքներուդ համար: «Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ քեզի, եթէ մարդ մը նորէն չձնանի, չի կրնար Աստուծոյ թագաւորութիւնը տեսնել»: (Յովհ. 3. 3:)

ՀԵՌՈՒՆ ՆԱՅԷ

Դրականութեամբ զբաղող տիկին մը ակնարոյթի մը դիմեց աչքերուն մէջ ունեցած ցաւի մը համար: Քննութիւնէ մը վերջը տօքթօրը ըսաւ. «Տիկին, ձեր աչքերը յոգնած են, հանգստի պէտք ունին անոնք»:

— «Բայց այս անկարելի է, զբաղումներս կ'ստիպեն զիս որ զսնունք զործածեմ, ըսաւ տիկինը:

— Զեր տանը աւջեւ տարածուող ընդարձակ տեղարաններ կա՞ն հարցուց ակնարոյթը պահ մը խորհելէ ետքը:

— Ոհ, անշուշտ, պատասխանեց կինը. ասջեւի պատշգամէն կրնամ զիտել կապոյտ լերանց վեհատեսիլ սարերը. Իսկ ետեւի պատուհաններէն կրնամ տեսնել Ալէկէնի լերան ստորոտը:

— Շատ լաւ, ձեզի պէտք եղածը ճիշդ այդ է: Երբ աչքերուդ մէջ յոգնութիւն կ'զգաս, գնա՛ եւ այդ լեռները տասը վայրկեան զիտէ, քսան վայրկեան զիտել աւելի լաւ է: Հեռու ուղիւսած նայուածքը պիտի հանգստացնէ աչքերդ:

Կարճ ժամանակի մը համար վերջընենք մեր աչքերը եւ զիտենք այդ հեռակայ երկնային բարձրութիւնները: Հեռուն զիտել շատ մը յոգնածները պիտի հանգստացնէ:

ՏԵՂԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ԷՔԻԶ-ՕԼՈՒԳԻ ԴՊՐՈՅԸ

Ամերիկաբնակ Տիար Յակոբ Նաճարեանի թեւադրութեամբ եւ իր ծախքով միջարանուանական դպրոց մը բացուած էր բարերարին բնավայրը՝ Էքիզ Օլուպի մէջ, Պատ. Յ. Կիւրլէքեանի տեսչութեան տակ: Դպրոցը իր առաջին տարեշրջանը բոլորած եւ անդրանիկ ամառներ ի հանդէսը կատարած է Յուլիս 1 ին: Շրջակայ գիւղերէն բաւական հանդիսականներ ներկայ գտնուած են, եւ Քէսապի միւտիքը Կարապետ Էքի. ալ կարճ ուղերջով մը զբոսացականները եւ ներկաները քաջալերած է: Իսկապէս շնորհաւորումի արժանի է Տիար Յ. Նաճարեան իր այս ձեռնարկին համար, որուն մասին «Երախտագիտական զգացում կը տածեն Էքիզ Օլուպցիք», կը գրեն նոյն վայրէն:

ԶԱՀԼԷՆ ԼՈՒՐԵՐ

Պէյրութաբնակ բարեկամ մը իր Զահլէ այցելութեան առթիւ մեղի կը գրէ. —

Զահլէի Հայ. Աւետ. համայնքին մէջ, որ 115 հոգիներէ կը բաղկանայ, քրիստոնէական գեղեցիկ հոգի մը տիրէ: Տնտեսապէս քիչ մը աւելի լաւ պայմաններու մէջ են քան Պէյրութի քէմբի ժողովուրդը, բայց միշտ գոհ են: Շատ ուրախալի էր իրենց մէջ տեսնել ծառայութեան ոգի իրարու հանդէպ, աղօթասիրութիւն, լուրջ հետաքրքրութիւն հոգեւոր նիւթերու մասին: Յունիս ամսուան մէջ Պր. Արմենակ Թօփճեանի առաջնորդութեամբ կատարուած աղօթածողովները բարիք մը եղաւ մասնակցողներուն համար:

Ուրիշ մը դարձեալ նոյն վայրէն կը գրէ թէ Տիար Լեւոն Կ. Վարպետեան՝ Օր. Աշխէն Թ. Զաղասեանի հետ ա-

մուսնութեան ատթիւ գեղեցիկ հարսանեկան հանդէս մը սարքուած է, որ բոլոր ժողովուրդին համար խնջոյքի և ուրախութեան պահ մը եղած է: Տիար Լ. Վարպետեան որդին է իր առատածեռնութեամբ ծանօթ բնիկ Գիւլիսցի Կարուճ աղա Վարպետեանի: Նոր փեսան Տ տարի առաջ Ամերիկա գացած, գեղազործական դասընթացքը լրացուցած և ապա Տիթրոյթ հաստատուած է, ուր իր առաքինի, ուշիմ, ջանասէր ընթացքով սեպհական մեծ գեղագործարանի մը տէր դարձած է: Նոր հարսը Պէյրութի Ամերիկեան Համալսարանի ուսանողուհիներէն է հայկական համեստութեամբ և քաղցրարարողութեամբ օժտուած:

Այս առթիւ կը շնորհաւորենք նորապըտակ ամուլը և անոնց ծնողները:

ՍՈՒՐԻՈՅ ՀԱՅ ԱԻՆՏ. ՄԻՈՒԹԵԱՆ ՅԱՌԱՋՈՒԿԱՅ ԺՈՂՈՎՐ

Միութեան տարեկան ժողովը այս տարի, ինչպէս որ ասկէ առաջ գրուեցաւ, Գէսապի մէջ պիտի կատարուի, Օգոս. 21-28 ին, և պիտի գրադի եկեղեցիներուն գործնական հարցերուն և զլծուարութիւններուն մասին խորհրդակցութեամբ, «Ապագայի համար հաստատ չէնքի կառուցումը» ընդհանուր նիւթին տակ, որուն ստորաբաժանումներն են. —

1. Գիւղական համայնքներուն յատուկ հարցեր:
2. Եկեղեցիներու ելեւմտական հարցերը:
3. Աւետ. ժողովուրդի յատուկ ընկերային վարք ու բարք:
4. Եկեղեցական կեանքի յարակից հոգեւոր հարցեր:
5. Փոխադարձ օգնութիւն և ներքին աւետարանչութիւն:
6. Ընդհանուր աւետարանչական հարցեր:
7. Կրթական հարցեր:

Համաժողովը պիտի սկսի առաջին անգամ նկատի առնելով եկեղեցիներու տեղեկագրութիւնները, որոնց պիտի յաջորդեն ընդհանուր նիւթին մասին խորհրդակցութիւնները: Ընդհանուր նիւթին իւրաքանչիւր ստորաբաժանումի մասին կարճ գրութեան մը ընթերցումէն վերջ բոլոր պատուիրակները ազատ պիտի ըլլան մասնակցելու խորհրդակցութիւններուն: Ժողովին գալէ առաջ իւրաքանչիւր պատուիրակ մասնաւորապէս գրուած յայտագիր մը պիտի ունենայ, ժողովին պատրաստուած կարենալ գալու համար: Համաժողովը (conference) իր գործը պիտի աւարտէ Ծարաթ օրը, Օգոս. 24 ին: Միութեան ժողովը իր մասնաւոր նիստերը պիտի ունենայ պահանջին համեմատ: Կիրակիէն վերջ մնացեալ երեք օրերը Օգոս. 26-28, պիտի յատկացուին բարեպաշտական և հոգեւոր ժողովներու:

ԼՈՒՐԵՐ «ՄԳՈՒՂ ԱՎ ԲԻԼԻՃԸՆ»ԷՆ

«Սքուլ ալ Բիլիճըն»ի նախագահը Վ. Է. Փայիր արձակուրդին ատթիւ մէկ տարուան համար պիտի երթայ Ամերիկայ, իր բացակայութեանը զինքը պիտի փոխանորդէ դպրոցին առաջին նախագահը Տր. Ֆ. Կուտսէլ. Վեր. Ճ. Մարչ ևս Ամերիկա մեկնած է. դպրոցին մէջ իր տեղը պիտի գրաւէ Մր. Ռօյ, Հնդկաստանի նախկին միսիօնարը, որ Հարվըրտի մէջ մէկ տարուան յետընթացաւարտի ուսում մը առած է վերջացող տարուան մէջ: Կրպորսէն, Սուրիայէն, Պուլկարիայէն, Սելանիկի Ամերիկեան Գոլէճէն և Աթէնքէն նոր ուսանողներ ընդունուած են յատկապէս տարուան համար: Ուրախութեամբ կ'իմանանք որ Պորտը որոշած է Սքուլ ալ Բիլիճընի համար սեպհական չէնքի նիւթեան Ֆալէրոնի ծոցը, Աթէնքի մէջ:

Ա. ՊՕՐՏԻ ԺՈՂՈՎԸ Կ. ՊՈԼՍՈՅ ՄԷՋ

Մերձ. Արեւելքի մէջ Ամերիկեան Պօրտի առաքելութիւնը, որ կը պարուհակէ Թուրքիան, Յունաստանը եւ Սուրիան, իր ժողովը ունեցաւ Կ. Պոլսոյ մօտ Էրէնքէօյի մէջ, Մարմարայի եզերքին վրայ, Յունիս 28 Յունիս 10ին: Ինչոր ներկաները, թիւով աւելի քան 90 հոգի, հարբնկալուեցան Ամերիկեան Լիսէի կողմէն, որ Պարտիզակի Մանչեսթըր Վարժարանին շարունակութիւնն է եւ իրր Լիսէ կառավարութենէն նոր պաշտօնապէս ճանչցուած է:

Պօրտի Մ. Արեւելքի մէջ ունեցած գործին մասին տեղեկագրութիւններ կարգացուեցան եւ ապա մտքերը կեդրոնացան կարգ մը մեծ նիւթերու վրայ. կրօնական դաստիարակութիւն եւ նկարագրի կազմութիւն, քրիստոնեաներուն պատգամը եւ դիրքը Իսլամներուն հանդէպ, թուրք գիւղացիներուն կեանքի պայմանները եւ անոնց ծառայելու միջոցները: Պուլկարիոյ ներկայացուցիչը Միսիս Հասքէլ, պատմեց գիւղական դպրոցներուն մասին: Այս հաստատութիւններու մէջ պուլկար երկսեռ երիտասարդները կը սորվին իրենց գիւղական աշխատանքները աւելի գիտական, դիւրին եւ կատարեալ կերպով ընելու միջոցները: Պուլկար կառավարութիւնը ասոնց տուած է պէտք եղած գետինը: Այս ժողովներուն յաջորդեց երկօրեայ բարեպաշտական ժողովները Տր. Ֆ. Կուսսէլի առաջնորդութեամբ:

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷՋԸ

ԾՆՈՒՆԴԻ ԵՐԿԸ

Ազատ քաղաքացիական Չարլս Տիքընսի
գրուածքներէն

ԳԼՈՒԽ Ա.

ՄԱՐԼԻԻ ՈՂԻՆ

Սքրուճ այդ օրը մեղամաղձոտ վիճակի մէջ էր. ան գնաց իր սովորական

ճաշարանը, ընթրեց, իրիկուան թերթերը աչքէ անցուց, ու վերջէն անգամ մը եւս այն օրուան գործաւնութիւններուն վրայ մտածելէ ետքը գուրս ելաւ եւ գէպի տուն ուղղուեցաւ պատկեղու համար: Իր բնակած տունը ատենօք իր մեծած ընկերոջը բնակարանն էր. այս շէնքը տխուր եւ հին երեսոյթ մ'ունէր, թաղին միւս շէնքերուն կանոնաւոր շարքէն դուրս մնացած, ներսի կողմը անբաւական լուսաւորուած, տարօրինակ տպաւորութիւն մը ունէր: Կարծես թէ այս տունը փոքր եղած ատենը միւս տուններուն հետ պահուելու քիւղցեր էր, եւ պահուելու համար հոն փախեր եւ վերջը անկէ դուրս գալիք ճամբան մոռնալով հոն՝ տուններուն ետեւ մնացեր էր: Այս շէնքին մէջ միւսակ Սքրուճ կը բնակէր: Բակը այնքան մութ էր որ մինչեւ անգամ Սքրուճ, որ անոր ամէն մէկ քաղը գիտէր, խարխալելով հագլու կրցաւ անցնիլ ու զըտնել տան դռնը: Մշուշը այնքան թանձր էր այդ գիշեր՝ որ կարծես թէ ձմրան ոգին տխուր մտածումներու մէջ նստեր էր սեմին վրայ:

Սաչափը իրողութիւն մ'է թէ այն դրան բաղնիքը (շախախա) ուրիշ տուններու բաղնիքէն բնաւ տարբերութիւն չունէր, միայն շատ մեծ էր. դարձեալ իրողութիւն մ'է թէ Սքրուճ ամէն առաւօտ եւ ամէն իրիկուն զայն տեսած էր. եւ Սքրուճ ուրիշ մարդոցմէ աւելի երեւակայութիւն ունեցող մէկը չէր. սա ալ չը մոռնանք յիշել թէ Սքրուճ Մարլիի վրայով չէր խորհէր այդ իրիկուն:

Արդ, աս բաներն ասանկ ըլլալով, թող ոեւէ մէկը բացատրէ ինձի, եթէ կրնայ, թէ ինչպէ՞ս եղաւ որ Սքրուճ, երբ այդ գիշեր բանալին դրան կղպանքին մէջ խօթեց, բաղնիքին տեղը տեսաւ Մարլիին գէմքը, թէպէտեւ բողբուջի ամենեւին ոեւէ փոփոխութեան ենթարկուած չէր:

Այո, ճիշտ Մարլինն զէմքը, ան առջ թէ ուրիշ առարկաներու պէս ազօտ ու անորոշ, այլ խիստ որոշ կերպով կը երևէր, իր վրայ տխուր լոյս մ'ուսնենալով: Բարկացած կամ կատաղի նայուածք մը չունէր, այլ իր սովորական նայուածքով կը նայէր Սքրուճի: Մազերը խառն ի խուռն, աչքերը խոշոր րացուած ու անշարժ: Սքրուճ սարսափեցաւ այդ կապուտապոյն զէմքէն իր արիւնը պաղկեցաւ ու սիրտը խուժեց, ջիղերը պրկուեցան: Եւ մինչ կը նայէր այդ սոսկալի զէմքին, ահա ան աներեւոյթ հղաւ, և նորէն հին դրան բազմաթիւ կը կենար իր նախկին տեղը: Սքրուճ զոգզոջուն ձեռքով բանալին գարձուց, զուռը բացաւ, ներս մտաւ և մոմը վառեց: Դուռը կղպեց, սրահէն անցաւ, և սանդուղներէն վեր ելաւ, կամաց կամաց քալելով: Իր ննջարանը մտնելէ առաջ անգամ մը միւս բոլոր սենեակները աչքէ անցուց տեսնելու համար թէ արդեօք ամէն բան իր տեղը էր. սիրտը հանգիստ չէր ու շատ կը վախնար: Հիւրանոցը, ննջարանը, մառանը իրենց սովորական վիճակին մէջ էին: Սեղանին տակը նայեցաւ, մարդ չըկար, բազմոցին տակը՝ մարդ չըկար: Կրակարանին մէջ քիչ մը կրակ կար մէկ կողմը իր ապուրը, զգալ մը և պնակ մը: Մահճակալին տակ՝ ոչ ոք, պահարանին մէջ՝ ոչ ոք, և ոչ ոք իր գիշերանոցին մէջ՝ որ կասկածելի երևոյթով կը կենար գիմացի պատին վրայ կախուած: Մառանը սովորականին պէս էր, փոշոտ սնտուկներ, հին կօշիկներ, երկու զամբիւղ, լուացքի տաշտը, և ունեւիլին իրենց տեղերն էին:

Սքրուճ գոհ սրտով իր սենեակը մըտաւ, զուռը զոյցեց, և բանալին երկու անգամ գարձնելով կղպեց զայն: Այս կերպով ինքզինքը ունէ անակնկալէ առկա զգալով հանեց իր փողկապը, հազաւ իր գիշերանոցը, հողաթափը, և

գիշերուան գլխարկը գլուխը գնելով կրակարանին դէմ նստաւ իր ապուրը ուտելու: Ցուրտը սաստիկ էր, իսկ կրակարանին մէջի կրակը շատ տկար. այդ ափ մը փայտածուխի կրակը զրեթէ ոչինչ էր այսպիսի դառնաշունչ գիշերուան մը համար. ուստի Սքրուճ ստիպուեցաւ կրակարանին խիստ մօտիկը նստիլ տաքնալ կտրեխալու համար: Ատենօք այս հին կրակարանը Հօլանտացի վաճառական մը շինել տուած էր, անոր ներսի զին տարօրինակ ձեւերով կղմնտրներով պատած էր, ու անոնց վրայ Սքրուճ զանազան պատմութիւնները ցուցնող նկարներ կային: Կայէն, Աբել, փարաւոնի աղջիկը, Սարայի թագուհին, հրեշտակներ, Աբրահամ, բազմաւոր Առաքեալները և շատ ուրիշ նկարներ կրնային իր ուշադրութիւնը գրաւել, և սակայն եօթը տարի առաջ մեռած Մարլինն զէմքը նորէն եկաւ, և կըլլեց բոլոր միւս նկարները:

«Կրո՛ղ» ըսաւ Սքրուճ, և սարսափած ոտքի ելելով սկսաւ քալիլ սենեակին մէջ: Բանի մը անգամ դառնալէ վերջ նորէն նստաւ. մինչ գլուխը աթոռին կը կռնեցնէր, զէմը նայելով տեսաւ հին զանգակ մը որ ատենօք ուրիշ սենեակի մը հետ հաղորդակցութեան համար կը գործածուէր, իսկ հիմայ երկար ժամանակէ իվեր անգործածելի հղած էր: Ինչ մեծ եղաւ Սքրուճի զարմանքը երբ տեսաւ որ զանգակը սկսաւ ճօճել: Նախ, խիստ մեղմ կերպով կը ճօճէր, առանց ունէ ձայնի, յետոյ աւելի սաստիկ, ու վերջապէս սկսաւ բարձրաձայն հնչել, ասոր վրայ առն մէջ գտնուող բոլոր միւս զանգակներն ալ սկսան հնչել. ասիկայ բոլորի մը չափ շարունակեց թէեւ Սքրուճի ժամ մը թուեցաւ. ու յետոյ բոլոր զանգակները միասին լռեցին:

(Շարունակելի) (5)